ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների մասին

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Կրճատ անվանումը	ՀՊՄՀ
Գործունեության հասցեն	375010 ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի 17
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	Չունի

ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՄՀ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ՀՊՄՀ-ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

Քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը:

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	02 ապրիլ 2015
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝	04 մայիսի 2015
փորձագիտական այցի իրականացում՝	25-29 մայիսի 2015
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	09 սեպտեմբերի 2015
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	11 սեպտեմբերի 2015

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով[2]:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համալսարանն իր գործունեության գերակայություն է համարում մասնագիտորեն մրցունակ, խորը գիտելիքներով օժտված, բազմակողմանիորեն զարգացած մանկավարժների պատրաստումն ու վերապատրաստումը:

2011-2015թթ.-ի ռազմավարական պլանում հստակ ձևակերպված են ՄՈՒՀ-ի առաքելությունն ու նպատակները, որոնց հիմնականում համահունչ է ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը: Չնայած յուրաքանչյուր նպատակի համար նկարագրված է առկա վիճակը, մարտահրավերները, ակնկալվող արդյունքներն ու գնահատման կողմնորոշիչ ցուցիչները, այնուամենայնիվ, վերջիններս չափելի չեն, չեն արտացոլում ռազմավարական նպատակների իրականացումն ու ձեռքբերումները և հետագա հստակեցման կարիք ունեն:

Ներկայումս համալսարանն արտոնված է իրականացնել կրթական գործունեություն 10 ֆակուլտետներում 71 մասնագիտությունների գծով, որոնցից 35-ը՝ բակալավրի, 36-ը՝ մագիստրոսի, ևս 7-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում: Մասնագիտությունները խմբավորված են երեք հիմնական ոլորտներում՝ մանկավարժական, սոցիալական և մշակութային, ինչը բխում է համալսարանի առաքելությունից: Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ի մասնագիտության կրթական ծրագրերը համապատասխանում են ՄՈՒՀ-ի որդեգրած առաքելությանը: ՄԿԾ-ներն այժմ արդիականացվում են՝ ուսանողներին ներկայացվող պահանջները, սահմանված վերջնարդյունքները և ուսանողակենտրոն ուսումնառության մոտեցումներն առավել թափանցիկ դարձնելու համար: Այնուամենայնիվ, բարեփոխումներն անցումային փուլում են և առայժմ ինստիտուցիոնալացված չեն, դրանք փորձարկվել են մի քանի ծրագրերի օրինակներով՝ առանց շահակիցների կարիքների վերհանման և վերլուծման: Հարկ է նշել, որ ՄԿԾ-ների մշակման և վերանայման աշխատանքերում գործատուների դերակատարությունն ու ներգրավվածության աստիճանը ցածր է:

Համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն ուսումնառության մոտեցում, ինչը դեռևս ներդրման փուլում է գտնվում: Ուսանողակենտրոն ուսուցման պրակտիկան, սովորողների կրթական առավել ինքնուրույն գործունեության կազմակերպման տեսանկյունից, բարելավման կարիք ունի: Թեև ՄՈՒՀ-ում մշակվել է գրագողության կանխարգելման և ակադեմիական ազնվության ընթացակարգ, սակայն գրագողության կանխարգելման մեխանիզմները գործնականում չեն աշխատում, իսկ ակադեմիական ազնվության վերաբերյալ իրազեկումը լիարժեքորեն չի իրականացվում:

Համալսարանի ղեկավարությունը կարևորում է փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը: Վերջին տարիներին ՀՊՄՀ-ն ակտիվ քաղաքականություն է վարում ՄՈՒՀ-ի միջազգային կապերի զարգացման և ամրապնդման

---

[1] **Հավելված 1** ՝ Փորձագիտական խմբի կազմը

[2] **Հավելված 2**՝ Ամփոփ գնահատում

ուղղությամբ՝ ներգրավվելով մի շարք միջազգային ծրագրերում, նպաստելով ուսանողների և դասախոսների շարժունությանը, իրականացնելով համատեղ ծրագրեր և այլն: Այդուհանդերձ, թույլ են դասախոսական կազմի և ուսանողների շարժունությունը խթանող մեխանիզմները, հիմնականում շարժունություն ապահովվում է մի քանի ծրագրերի շրջանակներում, ընդ որում՝ մասնակից ուսանողների թվաքանակը մեծ չէ:

ՀՊՄՀ հետազոտական գործունեությունը բավական սահմանափակ է ինչպես միջազգային հետազոտությունների իրականացման, այնպես էլ ուսանողների և դասախոսների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածության տեսանկյունից: ՀՊՄՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հստակ գործիքակազմ դեռևս մշակված չէ: Որոշակի քայլեր այս ուղղությամբ արվում են. դրանք առավել արտահայտված են մագիստրոսական թեզերի և ասպիրանտական ատենախոսությունների թեմաներում և մագիստրոսական ծրագրերի կամընտրական հատուկ դասընթացներում, որտեղ անմիջականորեն արտահայտվում են դասավանդողների գիտական աշխատանքների արդյունքները: Չնայած ՄՈՒՀ-ի հետազոտական ուղղությունները հիմնականում մանկավարժության և հոգեբանության շրջանակներում են, այնուամենայնիվ հանրակրթության հիմնախնդիրներին միտված ուսումնասիրությունները սակավաթիվ են, հետազոտությունների արդյունքները հիմնականում չեն ներդրվում ուսումնական գործընթացում: Համալսարանը որոշ հաջողություններ է արձանագրել հետազոտությունների միջազգայնացման ուղղությամբ, որոնք, միասնական և համապարփակ քաղաքականության բացակայության պայմաններում, հատվածային բնույթ են կրում: Հետազոտություններին հատկացվող ֆինանսավորումը նույնպես սահմանափակ է:

ՄՈՒՀ-ն ապահովված է բավարար ռեսուրսներով՝ ուսումնական բավարար միջավայրի ձևավորման և սահմանված ռազմավարական խնդիրների լուծման ու նպատակների արդյունավետ իրականացման համար: ՄՈՒՀ-ի ռեսուրսային ապահովվածության հիմնական խնդիրները պայմանավորված են լաբորատորիաներում և գիտահետազոտական կենտրոններում հնացած սարքավորումների և նյութերի առկայությամբ: ՄՈՒՀ-ը նոր սարքավորումների ու նյութերի ձեռքբերման կարիք ունի, քանի որ դրանք կբարելավեն ուսումնական գործընթացը և կնպաստեն ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացմանն ու հետազոտական գործունեության ակտիվացմանը: Հարկ է նշել, որ, չնայած համալսարանն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար հիմնականում հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ, այնուամենայնիվ, ֆինանսական կառավարումը՝ բյուջեի բաշխումը չի իրականացվում ըստ գերակա ռազմավարական ուղղությունների: Ֆինանսական ռեսուրսներն առաջին հերթին ուղղվում են աշխատավարձերի ապահովմանն ու ենթակառուցվածքային ռեսուրսների և ուսումնատեխնիկական բազայի կատարելագործմանը:

ՀՊՄՀ-ն ունի անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ ՄՈՒՀ-ի առաքելությունն ու ՄԿԾ-ների նպատակներն իրանկանացնելու համար: Չնայած բուհն ունի մասնագետների ընտրության հստակ պահանջներ և ընթացակարգ, առանձին ՄԿԾ-ների համար նման կարգեր չեն սահմանված: ՀՊՄՀ-ում իրականացվում են դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի որակավորման բարձրացման աշխատանքներ, սակայն կարիքների վերհանման հստակ մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև դասախոսների կարիքների վերհանման ոչ ֆորմալ բնույթը կարող են վտանգ ներկայացնել հիմնական խնդիրների բացահայտման և լուծման համար: Դասախոսական կազմի վերապատրաստման համակարգի արդյունավետության վերաբերյալ ևս ուսումնասիրություններ չեն իրականացվել:

ՀՊՄՀ-ում ուսանողների հավաքագրումը, ընտրությունն ու ընդունելությունն իրականացվում են ընդունելության համապատասխան կարգերի հիման վրա՝ ըստ մասնագիտությունների հաստատված ցանկի և հատկացված տեղերի: ՀՊՄՀ-ի ուսանողները

համալսարանից ստանում են համապատասխան աջակցություն: ՄՈՒՀ-ում գործում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու, խորհրդատվություն տրամադրելու համակարգը, ուսանողների համար կազմակերպվում են տարբեր միջոցառումներ ու սեմինարներ: Փորձագիտական խումբը դրական է գնահատել այն փաստը, որ ուսանողները օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով կարող են դիմել անմիջապես վարչական անձնակազմին և համապատասխան արձագանք ստանալ: Սակայն կամընտրական դասընթացների ընտրության առումով մասնագիտական կողմորոշումը թերի է: Բավարար ուշադրություն չի դարձվում նաև ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանմանը, իսկ գործող մեխանիզմների ոչ լիարժեքությունը նվազեցնում է համալսարանի գործունեության արդյունավետության գնահատման հնարավորությունը:

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը ճկուն չէ. տարբեր մակարդակներում կառուցվածքային ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը թերի է: Ակնհայտ են կառուցվածքային հիերարխիկ կապերը, մինչդեռ հորիզոնական կապերը մասնատված են: Չնայած 2011-2014 թթ.-ին ՀՊՄՀ-ն կառուցվածքային փոփոխություններ է կատարել, ստեղծվել են նոր ստորաբաժանումներ և կառույցներ, այնուամենայնիվ, վերջիններիս գործառույթները հստակ տարանջատված չեն, տարբեր ստորաբաժանումներում որոշ գործառույթներ կրկնվում են: Որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունը երաշխավորող մեխանիզմների, ինչպես նաև արդյունավետության գնահատման որակական և քանակական տվյալների բացակայությունը հարցականի տակ է դնում կառավարման համակարգի արդյունավետությունը և ռազմավարական նպատակների թիրախային իրականացումը: Ներկայումս ՀՊՄՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնց անցկացման նպատակայնությունը, պարբերականությունը, մեթոդաբանությունը, ինչպես նաև հարցվածների ներկայացուցչականության շրջանակը թույլ չեն տալիս հարցումները համարել ներքին և արտաքին շահակիցների կարծիքների վերհանման արդյունավետ գործիք: Կառավարման համակարգի ամբողջ վարչարարությունը չի իրականացվում որակի կառավարման սկզբունքով: Չնայած տարբեր մակարդակներում առկա է պլանավորման գործընթացը, այնուամենայնիվ, վերջինիս արդյունավետության գնահատմանն անդրադարձ կատարված չէ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատել ՈՆԱ համակարգի ներդրմանն ուղղված ՀՊՄՀ քայլերը, այնուամենայնիվ դրանք դեռևս համակարգված բնույթ չեն կրում, համընդհանուր մոտեցում և ընկալում չկա: Չնայած ՀՊՄՀ-ն ունի մշակված որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր՝ գործողությունների պլանավորման տեսանկյունից հստակեցման անհրաժեշտություն կա: Տարբեր գործընթացները կանոնակարգող մեխանիզմների և գործիքակազմի արդյունավետության գնահատման բացակայությունը հնարավորություն չի տալիս գնահատել ՈԱ գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և համալսարանի գործունեության բարելավման վրա:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

1. ՄՈՒՀ-ի առաքելությանը և նպատակներին համահունչ մշակվել են ֆակուլտետների և ամբիոնների ռազմավարական պլաններ:
2. Ներքին շահակիցները ներգրավված են ռազմավարական պլանավորման գործընթացում, և նրանց նկատառումներն ու առաջարկությունները կարևորվել և հիմնականում արտացոլվել են ՄՈՒՀ-ի նոր ռազմավարության մեջ:
3. ՄՈՒՀ-ը Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում վերանայել է մի շարք կրթական ծրագրեր՝ դրանք արդիականացնելու նպատակով:

4. Նոր ընդունված ուսանողներին կրթական գործընթացներում ինտեգրելու նպատակով կազմակերպվում են տեղեկատվական բնույթի հանդիպումներ ռեկտորի, դեկանների, ամբիոնի վարիչների հետ:
5. Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի ստեղծումը կարևոր քայլ է՝ ուսանողներին աշխատաշուկա մուտք գործելուն նախապատրաստելու և աշխատաշուկայի վերլուծություն իրականացնելու տեսանկյունից:
6. ՀՊՄՀ-ն ունի անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար:
7. Վերջին տարիներին պրոֆեսորադասախոսական կազմը համալրվել է ՀՀ ԳԱԱ անդամներով և թղթակից անդամներով, որոշակի աճ է գրանցվել նաև վերջին երեք տարիներին ՄՈՒՀ-ի դասախոսական կազմում գիտությունների դոկտորների և թեկնածուների տոկոսային ցուցանիշներում:
8. ՄՈՒՀ-ն ունի ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված ռազմավարական խնդիրների լուծման ու նպատակների իրականացման համար:
9. Համալսարանն ունի տեղեկատվական կայք էջ, ռադիո և պաշտոնաթերթ՝ իրականացվող գործընթացների հաշվետվողականությունն ու թափանցիկությունն ապահովելու համար:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. Արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները հստակ չեն գործում, նրանց ներգրավվածության աստիճանը ռազմավարության մշակման գործընթացում ցածր է:
2. ՄՈՒՀ-ում կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ստեղծված նոր ստորաբաժանումների և կառույցների գործառույթները հստակ տարանջատված չեն, տարբեր ստորաբաժանումներում որոշ գործառույթներ կրկնվում են:
3. ՄԿԾ-ների բարեփոխումների իրականացման հստակ քաղաքականություն և համընդհանուր մեխանիզմներ չկան, նկատելի է, որ բարեփոխումներն իրականացնելիս առանձնապես չի կարևորվել շահակիցների կարիքների վերհանումն ու դրանց վերլուծությունը:
4. Արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների մշակման կամ վերամշակման աշխատանքներում ցածր է:
5. ՄՈՒՀ-ը չունի բենչմարքինգի իրականացման հստակ մշակված համընդհանուր մոտեցումներ, մեխանիզմներն ու նպատակները հստակ սահմանված չեն:
6. ՀՊՄՀ հետազոտական գործունեությունը բավականաչափ սահմանափակ է ինչպես ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքներում ներգրավվածության, այնպես էլ միջազգային հետազոտությունների իրականացման տեսանկյունից:
7. ՄՈՒՀ-ի գիտահետազոտական լաբորատորիաներում և կաբինետներում սարքավորումներն ու նյութերը հին են:
8. ՄՈՒՀ-ում օտար լեզվի իմացության մակարդակը ցածր է դասախոսների և ուսանողների շրջանում:
9. ՀՊՄՀ որակի ներքին ապահովման համակարգը դեռևս ամբողջովին ինտեգրված չէ ՄՈՒՀ-ի գործընթացներում:
10. Ամբողջապես չի գործառում պլանավորում-իրականցում-գնահատում-բարելավում ցիկլը:

Համալսարանին առաջարկվում է.

Առաքելություն և նպատակներ.

1) Մշակել և ներդնել ռազմավարական պլանի որակական և քանակական գնահատման, ինչպես նաև բարելավման հստակ մեխանիզմներ ու գործիքներ՝ ապահովելով դրանց

չափելիությունը, ձեռքբերված արդյունքների արդյունավետության գնահատումը և հետագա բարելավման հնարավորությունները:

2) ՄՈՒՀ-ի առաքելությունն արտահայտող նպատակներում հստակեցնել համալսարանի գիտահետազոտական գործունեության ուղղությունները, շեշտադրել նրանց ռազմավարական նշանակությունը ազգային և տարածաշրջանային մակարդակներում, առանձնակի կարևորելով համալսարանի շրջանավարտներին անհրաժեշտ առանցքային և մասնագիտական կոմպետենցիաների մշակումն ու շարունակական բարելավումը:
3) Ընդլայնել շահակիցների (մասնավորապես *արտաքին շահակիցների)* ընդգրկվածությունը ՌԾ մշակման, իրականացման գործընթացում և պարբերաբար վերլուծել շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը:
4) Կատարելագործել արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները:
5) Գնահատման կողմնորոշիչ ցուցիչները դարձնել առավել չափելի և հուսալի:

Կառավարում և վարչարարություն.

6) Վերանայել ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը՝ ապահովելով ռազմավարական նպատակների և կառավարման համակարգի համահունչությունը:
7) Հստակեցնել և համակարգել կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործառույթների բաշխվածությունը և ապահովել վերջիններիս արդյունավետ փոխգործակցությունը /հորիզոնական կապերը/:
8) Ներդնել միջամբիոնային և միջֆակուլտետային մակարդակներում լավագույն փորձի տարածման մեխանիզմներ:
9) Մշակել և ներդնել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշտադիտարկման հստակ մեխանիզմներ և գործիքակազմ:
10) Պարբերաբար ուսումնասիրել և վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնները, ներառյալ վիճակագրական և այլ տվյալներ, կիրառել ուսումնասիրության չափելի գործիքներ:
11) Բարելավել որոշումների կայացման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները:
12) Ստեղծել ներքին փաստաթղթաշրջանառության թափանցիկ համակարգ:
13) Կատարելագործել տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման համակարգը:
14) Հստակեցնել ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայությունների:

Մասնագիտության կրթական ծրագրեր.

15) Ընդլայնել ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՄԿԾ-ների (վերա)մշակման գործընթացներում:
16) Ապահովել ՄԿԾ-ների համակարգված մշտադիտարկում և գնահատում, կատարելագործել ՄԿԾ-ի արդյունավետության գնահատման մեխանիզմները:
17) Վերանայել կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացները:
18) Մշակել (ազգային և միջազգային) բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների արդյունավետ կիրառման մեխանիզմներ:
19) Իրականացնել շահակիցների կարիքների վերհանում և վերլուծություն(ներ)՝ ՄԿԾ-ների վերանայման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
20) Հստակ ձևակերպել ՄԿԾ-ների մակարդակով (բակալավրի և մագիստրոսի որակավորումների համար) ակնկալվող վերջնարդյունքները և ապահովել դրանց համապատասխանությունը ՈԱՇ-ին:

21) Մշակել մեխանիզմներ, որոնցով առանձին դասընթացների արդյունքները կհամադրվեն ամբողջ ՄԿԾ-ի վերջարդյունքների հետ;
22) Ապահովել ՄԿԾ-ի բովանդակության մատուցման տրամաբանական հաջորդականությունը (առարկաների փոխկապակցվածությունը):
23) Ապահովել դասավանդման մեթոդների կապը ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման ձևերի հետ:
24) Տարածել բուհի ՄԿԾ-ի մշակման և վերամշակման, արդիականացման ու բարելավման լավագույն փորձը:

Ուսանողներ.

25) Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգերն ու մեխանիզմները (ապահովել պարբերականությունը, գնահատել դրանց արդյունավետությունը):
26) Կանոնակարգել ուսանողների ուղղորդման և օժանդակության գործընթացը:
27) Ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը ՄՈՒՀ-ի գիտահետազոտական աշխատանքներում՝ ստեղծելով համապատասխան պայմաններ և միջավայր;
28) Մշակել ուսանողի ձեռնարկ, որտեղ ամրագրված կլինեն ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, ուսումնառության վերաբերյալ ողջ տեղեկատվությունը:
29) Ընդլայնել Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի ներգրավվածությունը, ամբողջովին ինտեգրել ՄՈՒՀ-ի գործընթացներին՝ ուսանողների ուսումնառությունն ու կարիերայի կողմնորոշման գործընթացն ավելի նպատակային և ուղղորդված դարձնելու նպատակով:
30) Ստեղծել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ուսումնական միջավայր՝ ապահովելով ուսումնառության մատչելիությունն ու հասանելիությունը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ.

31) Մշակել դասախոսների վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագիր և կանոնակարգ՝ վերհանելով դասախոսների այն որակավորումները, որոնք անհրաժեշտ են ՄԿԾ-ների իրականացման համար:
32) Ըստ կրթական ծրագրերի՝ մշակել պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող հստակ պահանջներ՝ հաշվի առնելով կոնկրետ ՄԿԾ-ների առանձնահատկությունները, վերհանել առանձին ՄԿԾ-ների գծով պրոֆեսորադասախոսական կազմի կարիքները, պլանավորել կոմպետենցիաների զարգացումը:
33) Խթանել երիտասարդ դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը՝ օգտագործելով համալսարանի պրոֆեսորադասախոսական ներուժը, ստեղծել առաջատար կրթական փորձի փոխանցման համակարգ և մեխանիզմներ:
34) Աջակցել և ապահովել պրոֆեսորադասախոսական կազմին մասնագիտական վերապատրաստման հնարավորություններով, ինչպես նաև խրախուսել դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունների զարգացումը՝ կադրային հոսունությունից խուսափելու համար:

Հետազոտություն և զարգացում.

35) Ռազմավարական ծրագրում ամրագրել ՀՊՄՀ-ի գերակա գիտահետազոտական առաջնահերթությունները:
36) Ընդլայնել և համակարգել հանրակրթական դպրոցի խնդիրներին վերաբերող տեսական և կիրառական գիտական հետազոտությունների շրջանակը:
37) Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

38) Պլանավորել ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներն ըստ ՄՈՒՀ-ի գիտահետազոտական առաջնահերթությունների, իրականացնել դրանց մշտադիտարկումը և քննարկումը:
39) Մշակել և կիրառել գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ, առաջընթացը չափելու մեխանիզմներ:
40) Ստեղծել հստակ մեխանիզմներ ապահովելու գիտահետազոտական գործունեության կապը ուսումնառության գործընթացի հետ, մշակել քաղաքականություն, համաձայն որի գիտական ուսունասիրությունը կդառնա ուսումնառության մեթոդ (research-oriented education):
41) Կատարել համապատասխան ֆինանսական ներդրումներ ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեությունը զարգացնելու և գիտական աշխատանք կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:
42) Մշակել հետազոտական գործունեության միջազգայնացման հստակ ռազմավարություն, խթանել միջգիտակարգային ուսումասիրությունները՝ ընդլայնելով միջազգայնացման հնարավորությունները:
43) Մշակել և կիրառել նորամուծությունների ու հետազոտությունների առևտրայնացման հստակ մեխանիզմներ՝ արդյունքները վերլուծելով տարեկան կտրվածքով:
44) Բազմազանեցնել կիրառական գիտահետազոտական աշխատանքները գործատուների հետ համագործակցության շրջանակներում:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ.

45) Բարելավել համալսարանի ուսումնագիտական ենթակառուցվածքները՝ միջոցներ տրամադրելով լաբորատորիաների վերազինմանը, նորագույն սարքավորումների և համապատասխան նյութերի ձեռք բերմանը:
46) Կատարել յուրաքանչյուր ՄԿԾ-ի իրականացման ու շարունակականության ապահովման համար անհրաժեշտ կարիքների վերլուծություն՝ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխման նպատակով:
47) Գնահատել ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը՝ իրականացնելով ֆինանսական միջոցների բաշխման և օգտագործման մշտադիտարկում:
48) Ներդնել փաստաթղթաշրջանառության ամբողջական էլեկտրոնային համակարգ, որը կհամապատասխանի ՄՈՒՀ-ի տեղեկատվության կառավարման քաղաքականությանն ու ընթացակարգերին:
49) Բարելավել համալսարանի ենթակառուցվածքները՝ հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին հնարավորինս ապահովելով ուսման համար անհրաժեշտ պայմաններով:

Հասարակական պատասխանատվություն.

50) Բարելավել հաշվետվողականության ապահովման մեխանիզմներն ու պարբերաբար գնահատել գործընթացի արդյունավետությունը:
51) Կատարելագործել հասարակության լայն շրջանակների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները:
52) Ապահովել հասարակության հետ հաղորդակցման շարունակականությունն ու հետևողականությունը:
53) Ընդլայնել ՄՈՒՀ-ի ազդեցությունը հանրակրթական դպրոցի բարեփոխումների իրականացման և հրատապ խնդիրների լուծման հարցում, օգտագործել համալսարանի փորձը և ներուժը դպրոցական կրթության զարգացման քաղաքականության մշակման և իրականացման գործում:

Արտաքին կապեր և միջազգայնացում.

54) Իրականացնել կարիքների վերհանում/վերլուծություն(ներ)՝ գնահատելու ՄՈՒՀ-ի միջազգայնացման ու արտաքին կապերի զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը և բարձրացնելու տեղեկատվության աստիճանը:
55) Վերանայել պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմերի շարժունության մեխանիզմները՝ ընդլայնելով մասնակիցների թվաքանակը տարբեր ծրագրերի շրջանակներում:
56) Նպաստել ներքին շահակիցների /դասախոսների, ուսանողների, վարչական կազմի/ օտար լեզվի իմացության զարգացմանը ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:
57) Վերլուծել միջազգային համագործակցության ազդեցությունը ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրականացման վրա:
58) Խթանել դասախոսների և ուսանողների շարժունությունը:

Որակի ներքին ապահովման համակարգ.

59) Բարելավել ՈԱ մեխանիզմները, որոնց միջոցով ՄՈՒՀ-ը կկարողանա գնահատել և շարունակաբար վերանայել ՈՆԱ համակարգը:
60) Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը բոլոր մակարդակներում:
61) Մեծացնել շահակիցների (հատկապես արտաքին) ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում և գնահատել ներգրավվածության արդյունավետությունը:
62) Ապահովել ՈԱ վարչության անկախությունը:
63) Կանոնակարգել տվյալների կառավարման գործընթացները և հստակեցնել ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման ու վերջինիս կառավարման մեխանիզմները:
64) Իրականացնել ՈԱ վարչության աշխատակիցների և ֆակուլտետային պատասխանատուների կարիքների վերհանում, կատարողականի գնահատում և արդյունքների հիման վրա ընդլայնել նրանց մասնագիտական զարգացման հնարավորությունները:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Միջազգային փորձագետի կողմից իրականացվել է նաև ՀՊՄՀ գործընկերային գնահատում միջազգային չափանիշներին համապատասխան, որը միտված է բուհի միջազգային մակարդակով մրցունակության բարձրացմանը և ՀՊՄՀ-ի ԵԲԿՏ ինտեգրմանը:

Դիտարկումներ

- Համալսարանը գտնվում է շարունակական զարգացման փուլում: Փորձագիտական խումբը նկատ՝ել է որոշակի թերացումներ համալսարանի ռազմավարության և վերջինիս իրականացմանն ուղղված գործողությունների միջև: Նկատվում է, սակայն, որ համալսարանի անձնակազմը մեծ ջանքեր է գործադրում համալսարանի առաքելությունն իրականացնելու համար:
- Ընդհանուր առմամբ, կրթական ծրագրերը գտնվում են արդիականացման փուլում մասնավորապես ուսանողներին ներկայացվող առավել թափանցիկ պահանջների և ուսանողակենտրոն մոտեցման կիրառման տեսանկյունից՝ հիմնվելով Օուլուի համալսարանի և միջազգային այլ ծրագրերի շրջանակներում իրականացված արժեքավոր հետազոտությունների վրա: Համալսարանում պետք է աշխատանքներ տարվեն ակադեմիական ազնվության չափանիշների մշակման ուղղությամբ, այնուհանդերձ, սա չի նշանակում, որ նկատվել են ակադեմիական անազնվության դեպքեր: Ֆակուլտետները և

ամբիոնները լրջորեն են վերաբերում ակադեմիական ազնվությանը, սակայն համալսարանը դեռ չի երաշխավորում, որ բոլոր ֆակուլտետների և կրթական ծրագրերի մակարդակում կա կիրառվող փորձ: Գնահատման գործընթացները ևս դառնում են ավելի թափանցիկ հաստատված չափանիշների և մի շարք ձևավորող և ամփոփիչ գնահատման ռազմավարությունների կիրառմամբ: Ուսանողները գոհ են հետադարձ կապի ապահովման մեխանիզմներից, սակայն բողոքարկման ընթացակարգին իրազեկվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտություն են տեսնում:

- Հետազոտական գործունեությունը սահմանափակ է (միջազգային) արդյունքի, ինչպես նաև հետազոտական աշխատանքներում ներգրավված պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների քանակի առումով: Այդուհանդերձ գովելի է դրական միտումն այն ուղղությամբ, որ համալսարանի համապատասխան ստորաբաժանումները գիտակցում են այն ուղիները, որոնցով կարելի է աջակցել անձնակազմին արձանագրելու շարունակական աճ միջազգային հետազոտությունների բնագավառում: Հասկանալի է, որ շարունակաբար քննարկվող ֆինանսական ռեսուրսների սակավության պարագայում, այդուհանդերձ, համալսարանը պետք է կարողանա հավելյալ ֆինանսական միջոցներ հատկացնել հետազոտական գործունեությունը խթանելու նպատակով:
- Միջազգային համագործակցության բաժինը գործում է և այն համալրված է համապատասխան աշխատակազմով: Ուսանողները հիմնականում տեղյակ են միջազգային շարժունության հնարավորությունների և համալսարանի միջազգայնացման արժեքի մասին: Ավագ կուրսի ուսանողները ողջունում են այս գործընթացը և զգալի զարգացում են նկատում վերջին հինգ տարիների ընթացքում: Պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները դրական են արտահայտվում մշակութային փոփոխության կարևորության, այլ մշակութային արժեքների ճանաչման, միջազգային և գլոբալ համակարգերում ինտեգրման կարիքի վերաբերյալ: Նրանք նաև տեսնում են, որ նման գործընթացները օգտակար են բոլոր ուսանողների համար ՀՊՄՀ-ի շրջանավարտների մրցակցային հնարավորությունները մեծացնելու տեսանկյունից: Իհարկե, կարելի է անել ավելին ողջ անձնակազմին միջազգային համագործակցություններում և գործընթացներում ընդգրկելու, մոտիվացնելու և յուրաքանչյուր ամբիոնի/ ծրագրի ուսումնական պլանները միջազգային հարթակ բերելու համար:
- Միջազգային մի քանի գործընկեր հաստատությունների հետ կան պայմանագրեր տվյալների և փորձի փոխանակման համար: Փորձագիտական խումբը համապարփակ և համակարգված միջազգային բենչմարքինգի իրականացման գործընթացի համոզիչ փաստեր չտեսավ: Որոշ ամբիոններ իրականացնում են բենչմարքինգ, սակայն դա չի իրականացվում համակարգված կերպով ինստիտուտիցիոնալ մակարդակում: Համալսարանը ունի ներուժ օգտագործելու հաստատության անձնակազմի փորձն ու գիտակցությունը այս գործընթացը շարունակելու նպատակով:
- Տվյալների հավաքագրման մեխանիզմներ կան, սակայն դրանք դեռևս ամբողջովին մշակված և ինտեգրված չեն որակի կառավարման գործընթացում: Կրթական ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող ներքին կառույցը մասնատված է աշխատում, առավել համակարգված և համաձայնեցված մոտեցումը կարող է ավելի օգտակար լինել:
- Փորձագիտական խումբը նկատեց բավարար հիմքեր տարբեր հանձնաժողովներում/խորհուրդներում ներքին շահակիցների ներգրավվածության վերաբերյալ, սակայն արտաքին շահակիցների ներկայացուցչականությունը, թվում է, թե սահմանափակ է: Պրակտիկայի վարչությունը ձևավորել է ամուր և արդյունավետ համագործակցություն տեղական շահակիցների և գործատուների հետ /որոնցից ոմանք ՀՊՄՀ շրջանավարտներ են/: Եթե տվյալ բաժինն առավել սերտորեն համագործակցի Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի հետ պրակտիկայի, շահակիցների ներգրավման

և ուսանողների զբաղվածության ուղղություններով, ապա արդյունքները հետագայում ավելի արդյունավետ կլինեն:

Խորհրդատվություններ

1. Որպեսզի համալսարանի պլանավորումը համապատասխանի առաքելությանն ու նպատակներին, և հղում կատարելով համալսարանի նշված 3-րդ նպատակին, այն է՝ ներմուծել ներառական կրթության կազմակերպման սկզբունքներն ուսումնական գործընթաց, համալսարանը պետք է բարձրացնի իր համբավը որպես ամբողջովին ներառական կրթություն իրականացնող հաստատություն: Այն պետք է երաշխավորի, որ բոլոր ուսանողների (անկախ կարողություններից) իրավունքները պաշտպանված են ու կարիքները բավարարված: Համալսարանը պետք է գտնի եղանակներ, որոնցով հնարավոր կլինի բավարարել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների պահանջմունքները և բարձրագույն կրթությունը հասանելի դարձնել առավել շատ սահմանափակ հնարավորություններով ուսանողների համար: Փորձը, որը առկա է հատուկ կրթության ֆակուլտետում, նույնպես կարող է նպաստել այս նպատակի իրականացմանը:
2. Համալսարանը պետք է ներդնի գնահատման առանցքային ցուցանիշներ /KPIs/, որոնք քանակական ու չափելի են և սահմանվում են միջստորաբաժանումային համագործակցության գործընթացի միջոցով, որպեսզի թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցները նպաստեն և պատասխանատվություն կրեն դրանք կիրառելու գործընթացում:
3. Համալսարանը պետք է սկսի ձևավորել վիրտուալ կրթական միջավայր՝ իր ֆիզիկական ռեսուրսները համալրելու համար: Վիրտուալ կրթական միջավայրը, որն ապահովում է դասընթացների նյութերի, կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության և համալսարանի կարգերի առցանց հասանելիությունը ուսանողներին կստեղծի ուսանողների հետ հաղորդակցության և ուսանողների փորձառության մակարդակի բարձրացման արդյունավետ նախադրյալներ: ՀՊՄՀ-ում կան բարենպաստ պայմաններ վիրտուալ կրթական միջավայրի մշակման և փորձարկման համար՝ մեծ նշանակություն տալով աշխատակազմի մանկավարժական փորձին, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների SS հմտությունների կիրառմանը: Այս կերպ հնարավոր կլինի ստեղծել նոր «խառը» ուսուցման մոտեցում, որը ներկայումս հաճախ է կիրառվում եվրոպական համալսարաններում:
4. Փորձագիտական խումբը կոչ է անում համալսարանին ընդլայնել իր հետազոտական գործունեությունը, համակարգել այն և հնարավորինս թիրախավորել:
5. Սույնը հնարավոր է իրականացնել կենտրոնացնելով ջանքերը նախ սահմանափակ քանակությամբ ընտրված գերազանցության կենտրոնների ստեղծման վրա: Այս առումով լավ օրինակ է շախմատի հետազոտության կենտրոնը: ՀՊՄՀ-ն ունի մանկավարժական հետազոտություններին զուգահեռ մեծահասակների կրթության հետազոտական կենտրոններ ստեղծելու և զարգացնելու բարենպաստ հնարավորություններ: Նման կենտրոնները կարող են խթանել նորարարությունն ու նոր գիտելիքների ձեռքբերումը: Այս մոտեցումը կարող է նպաստել նաև միջգիտական հետազոտությունների ոլորտի ընդլայնմանը: Համալսարանը պետք է կիրառի անձնակազմի ներուժի և ձեռք բերված հետազոտական արդյունքի համակարգված գնահատման մեխանիզմներ, որպեսզի որոշակիացվեն քանակական թիրախները, ներառյալ նաև նրանք, որոնք վերաբերում են միջազգային որակի հետազոտությանը:
6. Առկա որակի մշակույթը առավել ամրապնդելու նպատակով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի անձնակազմը և ուսանողները պետք է օգուտ ստանան որակի ապահովումից, այլ ոչ թե դիտարկեն այն որպես բեռ: Կրթության բարեփոխումների և որակի վարչությունը կոչված է կարևոր դերակատարություն ունենալու պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների իրավունքները պաշտպանելու գործընթացին օժանակելու հարցում:

Մասնավորապես, համալսարանը պետք է մշակի ակադեմիական ազնվության ապահովմանը միտված գնահատման հստակ ուղեցույց: Սա կարող է լինել ուսանողի ձեռնարկ, որտեղ բացատրվի, թե ինչ է ակադեմիական ազնվությունը և ինչպես խուսափել այն խախտելուց, որոնք են կարգերը խախտելու դեպքում կիրառվող հավանական պատժամիջոցները:

7. Համալսարանն ապահովված է մարդկային ռեսուրսներով, այնուամենայնիվ խորհուրդ է տրվում մշակել պրոֆեսորադասախոսական կազմի թիրախավորված և համակարգված մասնագիտական զարգացմանը նպաստող եղանակներ: Թիրախային կարող են լինել պրոֆեսորադասախոսական կազմի օտար լեզվի իմացության բարելավումը (որպեսզի նրանք կարողանան հաջողությամբ մասնակցել միջազգայնացման գործընթացներին) և վարչական կազմի գիտելիքների և հմտությունների զարգացումը կրթության կառավարման և որակի ապահովման բնագավառներում՝ ապահովելու կայուն աշխատուժ՝ ընդունակ իրականացնելու միջազգայնացման երկարաժամկետ պլանները:

ԲՈՒՀ-Ի ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փորձագիտական խումբը ուսումնասիրել է զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները: ՈԱԱԿ-ը նաև կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը և վերջնականացվել է փորձագիտական զեկույցը:

Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա փորձագիտական խումբը կատարել է խմբագրական և տեխնիկական փոփոխություններ, որոնց մասին նշումներ կան զեկույցի վերջնական տեքստում, սակայն չափանիշների գնահատականները փոփոխության չեն ենթարկվել:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

ՀՊՄՀ-ն ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են և ներկայացրել է «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց» (այսուհետ՝ Ծրագիր)՝ հաստատված ռեկտորի կողմից 11.09.2015թ.:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման զեկույցում նշված թերությունների վերացման բուհի մշակած ծրագիրը, **եզրակացնում է.**

Համալսարանը բացահայտված հիմնախնդիրների լուծման նպատակով հանձնառել է իրականացնել բարեփոխումներ իր գործունեության բոլոր ոլորտներում, հաշվի առնելով փորձագիտական խմբի ներկայացրած խորհրդատվությունները: Բոլոր ոլորտների համար սահմանված ռազմավարությունների արդյունավետ իրականացման համար կազմվել է գործողությունների ծրագիր: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ խնդիրներ բավարար չափով չեն կարևորվել, մասնավորապես.

- Գործողությունների հաջորդականությունը հիմնականում տրամաբանական է, սակայն գործողությունները և դրանց իրականացման քայլերը որոշ դեպքերում առանձնացված չեն, ինչը դժվարացնում է քայլերի արդյունավետ գնահատումը:
- Քայլերի մեծ մասի հաջորդականությունը ժամանակացույցում տրամաբանական է, իսկ քայլերի վերջնարդյունքների մեծ մասը ուղղված են գործողության նպատակի իրականացմանը:

- Պլանում հաճախ նշված են միայն գործողությունների իրականացման համար պատասխանատու կառույցները, պատասխանատու անձը նշված չէ:
- Գործողությունների իրականացման համար նախանշված ժամանակահատվածները հիմնականում իրատեսական են: Միևնույն ժամանակ առանձին քայլերի համար ժամկետները մեծամասամբ նշված չեն:
- Գործողությունների իրականացման վերջնարդյունքները և վերջնարդյունքի գնահատման ցուցիչները որոշ դեպքերում միացված են կամ կրկնվում են, ձևակերպումները հստակ չեն: Գործողությունների իրականացման գնահատումը նախատեսվում է կատարել տարբեր ցուցիչների միջոցով, միևնույն ժամանակ ազդեցությունը գնահատող ցուցիչներ հիմնականում բացակայում են:
- Գործողությունների իրականացման համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունն հաճախ շատ ընդհանրական է (երբեմն էլ բացակայում է):

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՄՈՒՀ-ն առաքելության և նպատակների իրականացման արդյունքների արդյունավետ գնահատման համար նախատեսում է հստակ մեխանիզմների ու գործիքների, ինչպես նաև գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ-երի) մշակման և բարելավման տնական գործընթացներ: Ուսումնասիրելով առաջատար բուհերի փորձը և տեղայնացնելով այն՝ նախատեսվում է կիրառել այն ուսումնական ստորաբաշանումների գործունեության արդյունավետության գնահատման համար, հաշվի առնելով նաև բուհի ուղղվածությունը, մասնավորապես մշակույթի ոլորտի առանձնահատկությունները և խուսափելով ընդհանրական մոտեցումներից: Հիմնականում ընդունելով ներկայացված գործողությունների տրամաբանությունը, նշենք, որ առանձին քայլերի հստակեցումը կապահովի գործողության արդյունավետ իրականացումը և գնահատումը: ՄՈՒՀ-ը նաև կարևորել է փորձագիտական խմբի խորհրդատվությունը՝ ընդլայնել արտաքին շահակիցների ընդգրկվածությունը ՌԾ մշակման և իրականացման գործընթացում, նախատեսելով որոշակի գործընթացներ ուղղված վերջիններիս ակտիվ ներգրավմանը և մշակելով ներգրավվածության հստակ մեխանիզմներ:

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընդունելով փորձագիտական խմբի խորհրդատվությունը և գիտակցելով ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի վերանայման անհրաժեշտությունը՝ ՀՊՄՀ ռեկտորի 2015թ. հուլիսի 8-ի թիվ 2-750 հրամանով ստեղծվել է հանձնաժողով՝ Համալսարանում անհրաժեշտ կառուցվածքային փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Նախատեսվում է հիմնել նոր վարչակառավարական կառուցվածք, որը կապահովի կառավարման համակարգի և Ռազմավարական նպատակների համահունչությունը, կառավարման համակարգի ռազմավարական նպատակների թիրախային իրականացումը և արդյունավետությունը, տարբեր մակարդակներում կառուցվածքային ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունը գնահատելու հնարավորությունը: Այս ամենը կյանքի կոչելու համար ՄՈՒՀ-ի կարևորում է տարբեր գործընթացների մշտադիտարկման, գնահատման, բարելավման հստակ և թափանցիկ մեխանիզմների և գործիքակազմի ներդրումը, ինչն էլ կապահովի կառավարման համակարգի ամբողջ վարչարարության իրականացումը որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով:

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՄՈՒՀ-ը պլանավորել է վերանայել կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները, նախանշվել են դրանց շարունակական գնահատման և վերանայման տարբեր միջոցառումներ՝ ուղղված ՄԿԾ-ների բարելավմանը ներքին և արտաքին շահակիցների կարծիքների

հաշվառմամբ: Նախանշվել են նաև այն գործողությունները, որոնք պետք է ապահովեն կրեդիտների հաշվարկման, բախշման և կուտակման միասնական ընկալումը, ինչպես նաև հանրընդհանուր մոտեցումները: Սակայն գործողությանների քայլերի բացակայությունը դժվարեցնում է գործընթացի արդյունավետ գնահատումը: Փորձագիտական խումբը խորհուրդ էր տվել մշակել բենչմարքինգի իրականացման համընդհանուր մոտեցումներ, հստակ սահմանելով վերջինիս մեխանիզմներն ու նպատակները, սակայն դրան համալսարանի կողմից ներկայացված բարելավման պլանում անդրադարձ չի կատարվում, ինչպես նաև անդրադարձ չի կատարվում ակադեմիական ազնվության հետ կապված խնդիրներին, մասնավորապես վերջինիս վերաբերյալ իրազեկման և համընդհանուր ըմբռնման ապահովմանը միտված քայլերին:

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՄՈՒՀ-ը պլանավորում է վերանայել ուսանողների կրթական կարիքները վերհանող մեխանիզմները, մշակելով հատուկ կանոնակարգեր, իրականացնելով համապատասխան գործողությունների արդյունավետության պարբերական գնահատում և վերլուծություն: Նախատեսում է հստակեցնել Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի գործառույթները և այն ամբողջովին ինտեգրել ՄՈՒՀ-ի կրթական գործընթացներում՝ կազմակերպելով միջոցառումներ, տրամադրելով օժանդակություն տարբեր հարցերում՝ մասնագիտական կողմնորոշում, թիրախավորված ուղղորդում և այլն: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար նախատեսվում է ստեղծել համապատասխան պայմաններ, սակայն այս գործողության համար առանձին քայլեր նախանշված չեն, ինչը թույլ չի տալիս արդյունավետ գնահատել այն: Փորձագիտական խումբը կարևորել էր ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում, սակայն գործողությունների պլանում չի նշվում, թե ինչ է նախատեսվում իրականացնել նպատակի ձեռքբերման համար:

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

Համալսարանը՝ վերլուծելով տիրույթին առնչվող խորհրդատվությունները, նախատեսում է վերանայել պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության, ատեստավորման, վերապատրաստման և խրախուսման քաղաքականությունը, որը կերաշխավորի կրթական ծրագրերի ելքային արդյունքների ձևավորումը: Կարևորվել են նաև սերնդափոխության հետ կապված հարցերը: Նախանշված բոլոր քայլերի իրականացման դեպքում հնարավոր է որոշակի հաջողությունների արձանագրում: Մինչդեռ առանձին քայլերի իրականացման ժամանակահատվածները հստակեցված չեն, և որոշ հրատապ գործողությունների համար (օրինակ, *պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագրի և կանոնակարգի մշակումը)* նախանշված ժամանակահատվածը վերանայման կարիք ունի:

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՄՈՒՀ-ը պլանավորում է մշակել նոր «բարեփոխված» ռազմավարական ծրագիր գիտահետազոտական ոլորտի համար, որը կընդլայնի համալսարանի գիտական գործունեության հեռանկարային պլանավորման և զարգացման հնարավորությունները: Նախատեսված է հետազոտական աշխատանքների *«թեմաների վերնագրերը համապատասխանեցնել հանրակրթական դպրոցի խնդիրներին վերաբերող տեսական և կիրառական գիտական հետազոտություններին»:* Կարծում ենք, որ պետք է կարևորվի գիտական ուսումնասիրությունների այն արդյունքների ներդրումը, որոնք պետք է նպատակաուղղված լինեն հանրակրթական դպրոցի խնդիրների լուծմանը և դրանով իսկ նպաստեն վերջինիս բարելավմանը և զարգացմանը: Բացի այդ, հարկ է նշել նաև, որ թիրախային հետազոտություն-ների որակի և ծավալի էական աճը հիմք կստեղծի հատուկ քաղաքականության մշակման համար, որը կընդլայնի ՄՈՒՀ-ի ազդեցությունը հանրակրթական դպրոցի բարեփոխումների իրականացման և

հրատապ խնդիրների լուծման հարցում, օգտագործելով համալսարանի փորձը և ներուժը դպրոցական կրթության զարգացման գործում:

Թեև համալսարանը, արձագանքելով փորձագիտական խմբի խորհրդատվությանը, պլանավորում է ուսումնական գործընթացը փոխկապակցել հետազոտական գործունեությանը, գործողությունների պլանից չի երևում, թե ինչպես է ՄՈՒՀ-ն ապահովելու հիշյալ նպատակի իրականացումը: Պլանավորված չեն այն քայլերը, որոնք կերաշխավորեն գործընթացի իրականացումը: Գործողությունների մեծ մասի համար սահմանված ժամկետները հստակեցման կարիք ունեն, նախանշված չէ յուրաքանչյուր քայլի համար անհրաժեշտ ժամանակահատվածը, որոշ գործողությունների համար քայլերը նշված են:

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Փորձագիտական խումբը հատուկ կարևորել է համալսարանի նյութատեխնիկական բազայի, լաբորատորիաների հագեցվածության բարելավումը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի և հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջավայր ապահովելու նպատակով, ինչպես նաև կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը միտված կարիքների վերհանման մեխանիզմների մշակումը: Համալսարանը որոշակի աշխատանք այդ ուղղությամբ արդեն իսկ կատարել է. գնահատվել են կատարվելիք աշխատանքների ծավալները, որոշվել է դրանց իրականացման առաջնահերթությունները: Սակայն, նշված չեն բոլոր քայլերը, որոնց արդյունքում կբարելավվի ռեսուրսային բազան և կապահովվի անհրաժեշտ լաբորատոր ռեսուրսների առկայությունը:

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակության իրազեկվածությունը բարձրացնելու, ինչպես նաև հանրության հետ արդյունավետ կապը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ը պլանավորում է մինչև տարեվերջ ունենալ նոր կայք, որտեղ լուծված կլինեն հետադարձ կապի, ինտերակտիվ գործիքների հետ կապված խնդիրները: Նախանշված են այն գործողությունները և քայլերը, որոնք միտված են հասարակության հետ աշխատանքների արդյունավետ պլանավորմանը, իրականացմանը և գնահատման մեխանիզմների կատարելագործմանը:

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Համալսարանը բարելավման պլանում ներկայացրել է միջազգայնացման մի շարք կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնք միտված են ստեղծելու համալսարանում «միջազգային համագործակցային միջավայր»: Ներկայացված գործողությունների և քայլերի հաջորդականությունը տրամաբանական է: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ դրանք կարելի է կյանքի կոչել համալսարանի գործունեության մյուս ոլորտներում որոշակի առաջընթացի պայմաններում (օր., համատեղ ծրագրերի կրկնակի աստիճանաշնորհումը հնարավոր է միայն ՄԿԾ-ների համապատասխան մակարդակի հասցնելու դեպքում):

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Համալսարանը պատշաճ կերպով վերլուծել է տիրույթին առնչվող փորձագիտական խմբի դիտարկումները և, հետևելով փորձագիտական խմբի կողմից արված խորհրդատվություններին, սույն չափանիշի սահմաններում կարևորել է որակի ներքին ապահովման ենթակառուցվածքի վարչական անկախության հարցը: Արդեն իսկ կատարվել են որոշակի փոփոխություններ՝ միտված ՄՈՒՀ-ում որակի մշակույթի ձևավորմանը: Նախանշված են անհրաժեշտ քայլերը, պատասխանատու անձիք և կառույցները, սահմանված են ժամկետները, ինչպես նաև վերջարդյունքները, սակայն առանձին դեպքերում այդ գործողությունների վերջնարդյունքների գնահատման ցուցիչներն այդքան էլ

տրամաբանական կապի մեջ չեն որակի ներքին ապահովման համար ՄՈՒՀ-ի կողմից սահմանված վերջնարդյունքների հետ:

Այսպիսով, փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլանի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՄՈՒՀ-ը հիմնականում հաշվի է առել փորձագիտական խմբի խորհրդատվությունները, մատնանշած թերությունները և պատրաստակամություն է հայտնում վերացնել դրանք: Բարելավմանը միտված գործողությունները և վերջիններիս իրականացման քայլերը հիմնականում ներկայացված են փորձագիտական խմբի առաջարկներին համահունչ:

Ուշադրություն է դարձվում թե՛ գործընթացների փաստաթղթային կանոնակարգման հարցերին, թե՛ առկա խնդիրների լուծմանը միտված կոնկրետ գործողությունների մշակմանը: Իրականացման ժամկետները հիմնականում հստակ են և իրատեսական, բացառությամբ առանձին դեպքերի: Իրականացվող գործողությունների պատասխանատվությունը դրված է համապատասխան աշխատանքային խմբերի ու կոնկրետ անձանց վրա:

Եզրահանգում. ***Փորձագիտական խումբը գտնում է, որ թերությունների վերացման ներկայացված պլանի հիմնական մասի իրականացումը իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Պլանավորված գործողությունների և քայլերի կատարումը բարելավման հիմքեր կստեղծի համալսարանական գործընթացների համար բոլոր ոլորտներում: ՄՈՒՀ-ը բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներ ունի մշակած ծրագիրը կյանքի կոչելու համար:***

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ խթանել ՀՊՄՀ-ին՝

1) առաջնահերթ լուծում տալ **Մասնագիտության կրթական ծրագրեր, Որակի ներքին ապահովման համակարգ, Կառավարում և վարչարարություն, Հետազոտություն և զարգացում** ոլորտներում առկա խնդիրներին,
2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
3) բուհի կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի վերանայման ժամանակ հաշվի առնել սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

ՈԱԱԿ փորձաքննության բաժնի ղեկավար	**Փորձագ. խմբի ղեկավար**	**ՈԱԱԿ հանձնակարգող**

5.10.2015

Հավելված 1

Փորձագիտական խմբի կազմը.

— **Ելենա Երզնկյան՝** ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
— **Ալան Հոու՝** Բաթ Սպա համալսարանի "Կրթություն և տարրական ուսուցում" ծրագրի պատասխանատու և ֆակուլտետի դեկան,
— **Ռոբերտ Խաչատրյան՝** ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
— **Սարգիս Գալոյան՝** ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի Մանկավարժության գիտահետազոտական բաժնի վարիչ, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու,
— **Մարիամ Հովհաննիսյան՝** ԵՊԼՀ Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի ուսանողուհի:

ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմ

— **Անի Մկրտչյան**- ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ, ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատու, և ՀՊՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի համակարգող,
— **Վարդուհի Գյուլազյան** – ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ, և ՀՊՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի համակարգող,
— **Անի Մազմանյան** – Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի Որակի ապահովման բաժնի համակարգող, և ՀՊՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի թարգմանիչ:

Հավելված 2

ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ[3]

Փորձագիտական խումբն իր գնահատումն ըստ հավատարմագրման չափանիշների ներկայացրել է հետևյալ աղյուսակով.

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարար է
2. Կառավարում և վարչարարություն	Անբավարար է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարար է
4. Ուսանողներ	Բավարար է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար է
6. Հետազոտություն և զարգացում	Անբավարար է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարար է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարար է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար է

[3] Գնահատումը կատարելիս փորձագիտական խումբը հետևել է «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգին» և Փորձաքննության անցկացման ձեռնարկում նկարագրված ընթացակարգին՝ իրականացնելով նախ չափորոշիչների, ապա նաև չափանիշների գնահատում: Կիրառվել է **«անբավարար» և «բավարար»** սանդղակը:

Փորձագիտական խումբը գնահատելիս օգտվել է հետևյալ սկզբունքներից.

- **անբավարար է,** եթե չափանիշի պահանջներին չի համապատասխանում, նման ձևով շարունակելն անթույլատրելի է, և հրատապ բարելավումների անհրաժեշտություն կա,
- **բավարար է,** եթե համապատասխանում է չափանիշի պահանջներին, չնայած որ կարող է լինել բարելավման անհրաժեշտություն: